ՄԱԲԹԵՐԱՅԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ
ՈՉ ՈՒՌՈՒՑՔԱՅԻՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐՈՎ ԲՈՒԺՎՈՂ ՊԱՑԻԵՆՏԻ ՀԱՄԱՐ

Մաբթերայի տեղեկատվական թերթիկ

Ոչ ուռուցքային հիվանդություններով բուժվող պացիենտի համար

Ինչու՞ են ինձ տվել այս թերթիկը:

Այս դեղը՝որը Դուք կիրառում եք, կարող է Ձեզ մոտ բարձրացնել վարակների առաջացման վտանգը: Այս թերթիկը Ձեզ կհուշի՝

- Ինչ պետք է իմանալ մինչև Մաբթերայի կիրառումը
- Որ նշաններն են վկայում վարակի մասին
- Ինչ պետք է անել, եթե կարծում եք, որ ունեք վարակ:

Թերթիկը նաև ներառում է Ձեր և Ձեր բժշկի անունը և հեռախոսահամարը:

Ի՞նչ պետք է անել այս թերթիկի հետ:

- Պահե՛ք այս թերթիկը Ձեր մոտ, ինչպես պահում եք Ձեր դրամապանակը կամ պայուսակը:
- Եթե դիմել եք բուժհաստատություն՝ ցույց տվե՛ք այն Ձեր բժշկին, բուժքրոջը կամ ատամնաբույժին, այլ ոչ միայն այն բժշկին, ով նշանակել է Ձեզ Մաբթերան

Պահե՛ք այս թերթիկը Մաբթերա դեղի վերջին դեղաչափը ստանալուց հետո ևս երկու տարի: Պատճառն այն է, որ բուժումից նույնիսկ մի քանի ամիս անց, հնարվոր է զարգանան կողմնակի ազդեցություններ:

Ո՞ր դեպքերում չպետք է կիրառել Մաբթերա:

Մի կիրառեք Մաբթերա, եթե ունեք ակտիվ վարակ կամ լուրջ խնդիրներ՝ կապված իմունային համակարգի հետ:

Ի՞նչ պետք է իմանալ հավելյալ

Մաբթերան հազվադեպ կարող է հանգեցնել գլխուղեղի ախտահարման, որը կոչվում է «պրոգրեսիվող մուլտիֆոկալ լեյկոէնցեֆալոպաթիա» կամ ՊՄԼ: Այն կարող է ունենալ մահացու ելք:

ՊՄԼ-ի նշաններն են.

- գիտակցության մթագնում, հիշողության կորուստ կամ կոգնիտիվ խանգարումներ
- հավասարակշռության կորուստ, քայլելու կամ խոսելու խանգարումներ
- մարմնի մկանային ուժի միակողմանի նվազում կամ թուլություն
- տեսողության վատացում կամ կորուստ:

Եթե դուք ունեք թվարկած նշաններից որևէ մեկը, ապա անմիջապես տեղեկացրեք դրա մասին Ձեր բժշկին կամ բուժքրոջը:

Որտեղի՞ց կարող եմ ստանալ հավելյալ տեղեկություն:

Հավելյալ տեղեկության համար ընթերցեք Մաբթերա դեղի օգտագործման հրահանգը

Բուժման առաջին օրը և կոնտակտային տվյալներ

Վերջին ներարկման օրը _____
Առաջին ներարկման օրը _____
Պացիենտի անուն _____
Բժշկի անուն _____
Բժշկի կոնտակտային տվյալներ_____

Բժշկի այցելելիս համոզվե՛ք, որ ունեք Ձեր կողմից կիրառվող բոլոր դեղերի ցանկը՝ նրան ցույց տալու համար

Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին կամ բուժքրոջը եթե ունեք հարցեր այս տեղեկատվական թերթիկի վերաբերյալ: